



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

06 մայիսի 2022 թվականի թիվ 65-Ա

ք. Երևան

«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի ապրիլի 01-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից՝ «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շողակաթ», «Ա-ԹիՎի», «Արմենիա TV», «Россия РТР» և «Ֆորտունա» տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրի վերահաղորդում իրականացնելու փաստը:

Հանձնաժողովը ղեկավարվելով Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մարտի 25-ի թիվ 18-Ա հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2022 թվականի մարտի 29-ին Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ ցանցային օպերատորի հեռարձակող կայանում ժամը՝ 15:00-ից 16:00-ն իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են թվով 42 հետևյալ տեսալսողական ծրագրերը՝ «Ա-ԹիՎի (ATV)», «Կենտրոն», «Երկիր Մեդիա», «Россия РТР», «Ֆորտունա HD», «Կինոման HD», «Ֆիլմզոն HD», «Խաղալիք HD», «Հայ ԹիՎի», «Первый канал», «Россия К», «НТВ Мир», «РЕН ТВ», «СТС», «Домашний», «ТНТ 4», «Кухня ТВ», «TLC», «Авто Плюс», «Звезда», «Discovery Channel», «Discovery Science», «ID Xtra», «National Geographic», «Nat Geo Wild», «Animal Planet», «Охота и Рыбалка», «Кинохит», «Киномикс», «Киносвидание», «Киносемья», «Мужское кино», «Индийское

кино», «Nick jr.», «Карусель», «Шансон ТВ», «Eurosport 1», «Eurosport 2», «Հանրային առաջին ալիք», «Շոդակաթ», «Արմենիա», «Շանթ»:

Ցանցային օպերատորի մոտ իրականացված մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրության և ցանցային օպերատորի կողմից 2022 թվականի մարտի 21-ին Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկի համադրության արդյունքում պարզվել է.

- ցանցային օպերատորի կողմից փաստացի վերահաղորդվում են՝ «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շոդակաթ», «Ա-ԹիՎի», «Արմենիա TV», «Россия РТР» և «Ֆորտունա» տեսալսողական ծրագրերը, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկերից,

- ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում ներառված «ТНТ Music», «РОССИЯ 24», «ТНТ-Comedy» (ТНТ), «ТВ-3 international», «Nickelodeon» տեսալսողական ծրագրերի վերահաղորդում վերջինիս կողմից չի իրականացվում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի ապրիլի 01-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի մարտի 29-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի ապրիլի 04-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը ներկայացրել է հետևյալ պարզաբանումը.

«Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շոդակաթ», «Ա-ԹիՎի», «Արմենիա TV», «Россия РТР» և «Ֆորտունա» ալիքները ներկայացված չեն Հանձնաժողով ներկայացրած ցանկում, քանի որ «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության կողմից ոչ միայն չեն վերահեռարձակվում այդ ալիքները, այլ այս պահին չունեն դրանց վերահեռարձակման հնարավորությունը: Նշենք նաև, որ այդ ալիքները բաժանորդին հասանելի են լինում նույնիսկ մեր կողմից վերահեռարձակվող ալիքների դադարեցումից հետո»:

Ի պատասխան Հանձնաժողովի այս գրությանը, ցանցային օպերատորը հայտնել է, որ «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերությունը ընդհանուր ոչ մի կապ չունի Spaider Net» (Սպայդեր Նետ) կաբելային հեռուստատեսության հետ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի՝ Հանձնաժողովն՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերը սահմանում են .

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

3. Տեսալսողական մեդիայի մասին օրենսդրության պահանջների խախտման վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում օպերատորի գործունեության տեղում դիտարկումն իրականացվում է կարգավորող պետական մարմնի նախագահի հրամանի հիման վրա:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց»:

Օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է .

«3. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերն իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան տարածման իրավունքով անվճար տրամադրվում են ցանցային օպերատորներին: Ցանցային օպերատորները պարտավոր են տարածել իրենց՝ անվճար տարածման իրավունքով տրամադրված տեսալսողական ծրագրերը: Ընդ որում, ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից»:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է .

Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը և առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ ներկայացված ապացույցներով, ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և 60-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով՝ ցանցային օպերատորի կողմից 2022 թվականի մարտի 21-ին Հանձնաժողով է ներկայացվել վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկը:

Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և դիտարկման արդյունքում 2022 թվականի մարտի 29-ին կազմված արձանագրությամբ նշված տեսալսողական ծրագրերի և ցանցային օպերատորի կողմից Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերի համադրության արդյունքում արձանագրել է, որ

ցանցային օպերատորի կողմից փաստացի վերահաղորդվում են մի շարք տեսալսողական ծրագրեր, որոնք բացակայում են վերջինիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկերից, ինչպես նաև ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում ներառված «THT Music», «РОССИЯ 24», «THT-Comedy» (THT), «TB-3 international», «Nickelodeon» տեսալսողական ծրագրերի վերահաղորդում վերջինիս կողմից չի իրականացվում:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասով ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը

վերահաղորդել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա, իսկ Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերն իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան, որոնք անվճար տրամադրված են ցանցային օպերատորներին,

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հաշվի առնելով այն փաստը, որ տեղում դիտարկման արդյունքում արձանագրվել է, որ ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են «Հանրային հեռուստաընկերության առաջին ալիք», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շողակաթ», «Ա-ԹիՎի», «Արմենիա TV», «Россия РТР» և «Ֆորտունա», տեսալսողական ծրագրերը, իսկ վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված այն փաստը, որ այս տեսալսողական ծրագրերը *բաժանորդին հասանելի են լինում նույնիսկ իրենց կողմից վերահեռարձակվող ալիքների դադարեցումից հետո* (իսկ Օրենքը պարտավորեցնում է ցանցային օպերատորին տարածել իրեն՝ անվճար տարածման իրավունքով տրամադրված տեսալսողական ծրագրերը): Ինչպես նաև ցանցային օպերատորի կողմից ցանկում ներառված, սակայն «THT Music», «РОССИЯ 24», «THT-Comedy» (THT), «TB-3 international», «Nickelodeon» տեսալսողական ծրագրերի վերահաղորդում չիրականացնելը չի նշանակում Օրենքի վերը նշված դրույթների խախտում, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ սեփական նախաձեռնությամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 18-րդ մասերի, 44-րդ հոդվածի 3-րդ մասի, 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, 60-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. Կարճել «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 10 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

6 մայիսի 2022թ.

ք. Երևան